



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

05.04.2019թ.

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

### ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ԱՄ-2019/31

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝ ի  
դեմս Միեր Անանյանի

Մասնակցությամբ «Մեգիէլ» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ՝

Ա. Սարգսյանի (լիազորագիր տրված՝ 06.03.2019թ.)

«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի լիազորված ներկայացուցիչ՝

Դ. Մինասյանի (լիազորագիր տրված՝ 12.03.2019թ.)

Քննելով «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական  
պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/2»  
ծածկագրով գնանշման հարցման շրջանակներում «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից 06.03.2019թ.  
ներկայացված և 06.03.2019թ. վարույթ ընդունված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲՔԱ-ԱՄ-  
201931 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

# **1. «Մեգիէլ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Մեգիէլ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 06.031.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը՝

«Գյումրու բժշկական կենտրոն» (այսուհետ նաև՝ Պատվիրատու) ՓԲԸ-ի կողմից հայտարարվել է ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/2 ծածկագրով գնման ընթացակարգ:

Մասնակցության հայտերի վերջնաժամկետը՝ 06.03.2019թ.

Հայտերի բացման օր է սահմանված 06.03.2019թ. ժամը 12:00-ն:

ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/2 ծածկագրով գնմանը մասնակցելու նպատակով «Մեգիէլ» ՍՊԸ-ն ուսումնասիրելով հրավերը՝ տեխնիկական բնութագրում արձանագրել է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի կարգավորումների հետ:

Ընկերությունը որպես իրավական հիմք նշել է Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 3-րդ հոդվածի 2-րդ մասը, 13-րդ հոդվածի 1-ին, 2-րդ 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերը:

Ընկերությունը հայտնել է, որ ուսումնասիրելով ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/2 ծածկագրով հրավերի տեխնիկական բնութագիրը, գտնում է, որ այն չի համապատասխանում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին:

Հրավերի տեխնիկական բնութագրերում առկա են այնպիսի ձևակերպումներ, որոնք հղում են անում կոնկրետ ֆիրմային անվանման, էսքիզին, մոդելին և առկա են նույնականացնող այնպիսի չափորոշիչներ, որոնց առկայությամբ գնման առարկա կարող է ապահովել հստակ մեկ արտադրող:

Ընկերությունը նշել է, որ օրենսդիրը վերը հիշատակված նորմով իմպերատիվ կանոն է սահմանել, որ «Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրում առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Մինչդեռ, հրավերի տեխնիկական բնութագրի 5, 15, 17, 20, 21, 22, 23, 24, 25, 26 և 27-րդ չափաբաժինների նկարագրով խախտվել է հիշատակված նորմի պահանջը և այդ

չափաբաժիններում համարժեք ապրանքատեսակ ներկայացնելու հնարավորությունից հնարավոր հայտատու ընկերությունները զրկվել են մասնակցելու հայտարարված գնման ընթացակարգին, քանի որ տեխնիկական բնութագրերում շրջանցվել է «կամ համարժեք» եզրույթը:

Օրինակ 15-րդ չափաբաժնով պատվիրատուին անհրաժեշտ է դիագնոստիկ կաթետորներ որտեղ նշված է արյան հոսքի հստակ արագության չափ, որը սահմանափակում է այլ մասնակիցների մասնակցությունը, ովքեր կարող են ներկայացնել արյան ծավալային հոսքի մեկ այլ արագության, համարժեք ապրանք, որը ֆունկցիոնալ առումով հնարավորություն է տալիս հասնել նույն արդյունքին, ինչպես պահանջվում է տեխնիկական բնութագրով:

Օրինակ 23-րդ չափաբաժնով պատվիրատուին անհրաժեշտ է բալոնային կաթետորներ, որտեղ նշված է բալոնային նոմինալ և մաքսիմալ ճնշումը, որը տարբեր արտադրողների մոտ լինում են տարբեր, սակայն ֆունկցիոնալ առումով թույլ են տալիս հասնել նույն արդյունքին, ինչպես պահանջվում է տեխնիկական բնութագրում:

Ընկերությունը գտնում է, որ նշված տեխնիկական բնութագրերում անհրաժեշտ բժշկական պարագաների նկարագրի ձևակերպումը հստակ ներկայացված չէ, որն էլ մասնակիցներին ճշգրիտ ընկալելու հնարավորությունից զրկում է, թե հրավերով ինչ գնման առարկա է անհրաժեշտ պատվիրատուին:

Սա վկայում է այն մասին, որ պատվիրատուի ներկայացված տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում օրենքով սահմանված նորմերին և հայտատուի համար ստեղծում են ապակողմնորոշող իրավիճակ:

Վիճարկվող հրավերով մասնակցությունն ըստ էության առաջացնում է մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտներ:

Ընկերությունը նշել է, որ Կարգի 22-րդ կետը սահմանում է, որ «Գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ.....»:

Պատվիրատուն օրենքին համապատասխան հրավեր ներկայացնելով սահմանափակում է հնարավոր հայտատու մասնակիցներին մասնակցելու հայտարարված գնման ընթացակարգին:

Ընկերությունը գտնում է, որ իրավական նորմերի խախտմամբ կազմված և ներկայացված հրավերը չի կարող ապահովել գնումների այն ընթացակարգը, որը նախատեսվել է օրենսդիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքով և դրանց իրականացման համար ընդունված իրավական ակտերով (ՀՀ կառավարության որոշումներ):

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին չկայացած հայտարարելու «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/2» ծածկագրով գնման ընթացակարգը:

Ընկերությունը ի լրումն բողոքի հայտնել է հետևյալը.

«Ներկայացված բողոքով Ընկերության կողմից վիճարկվում էր ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/2 ծածկագրով ներկայացված հրավերի տեխնիկական բնութագրի 5, 15, 17, 20, 21, 22, 23, 24, 25, 26, 27-րդ չափաբաժինները:

Ընկերությունը հայտջնել է, որ բողոքով ներկայացրել էր 15-րդ եւ 23-րդ չափաբաժինների վերաբերյալ Ընկերության դիրքորոշումը, սույնով ներկայացնում է նաև մյուս չափաբաժինների վերաբերյալ Ընկերության դիտարկումները:

5-րդ չափաբաժնով պատվիրատուին անհրաժեշտ է ախտորոշիչ կաթետորներ որտեղ նշված է արյան ծավալային հոսքի հստակ արագության չափ, որը սահմանափակում է այլ մասնակիցների մասնակցությունը ովքեր կարող են ներկայացնել արյան ծավալային հոսքի մեկ այլ արագության, համարժեք ապրանք, որը ֆունկցիոնալ առումով հնարավորություն է տալիս հասնել նույն արդյունքին, ինչպես պահանջվում է տեխնիկական բնութագրով:

17-րդ չափաբաժնով պատվիրատուին անհրաժեշտ է ուղղորդիչ կաթետորներ, որտեղ նշված է հստակ երկարություն, որը սահմանափակում է այլ մասնակիցների մասնակցությունը ովքեր կարող են ներկայացնել այլ երկարությամբ գնման ապրանք, որը ֆունկցիոնալ առումով համարժեք է, այսինքն՝ պատվիրատուն գնման ապրանքի համար նախատեսված երկարությունները պետք է ներկայացնել միջակայքով, օրինակ՝ 90-95 կամ 120-125 և այլն:

20-րդ չափաբաժնով անգիոպլաստիկայի նյութեր (դեղապատ ստենտ) գնման առարկայի բնութագրում պատվիրատուն նշել է, որ ստենտի ծածկը պատված լինի էվերոլիմուս դեղանյութով, սա հստակ հղում է կոնկրետ ստենտի, եթե պատվիրատուն նշեր օրինակ զետերալիմուս կրկին հղում կլիներ, մինչդեռ՝ պատվիրատուն պետք է պարզապես նշեր լիմուս ընտանիքի դեղանյութով պատված, որը իրենում չէր ներառի հղում կոնկրետ արտադրողի կամ պետք է նշեր համարժեք բառը:

Ինչ վերաբերում է ստենտի կառուցվածքին «2.25-3.0մմ տրամագծով ստենտն ունի երեք կարճ և երեք երկար ամրակներ միացած ոչ գծային կապով: 30.5-4.0մմ ստենտն ունի երեք կարճ և վեց երկար ամրակներ» ապա սա միանշանակ կլինիկական փորձաքննության տվյալներ են, որոնք բացի արտադրող ֆիրմայից ոչ ոք չի կարող հավաստիացնել դրա առավել արդյունավետությունը և այդ չափորոշիչը կարող է ապահովել հստակ մեկ ընկերություն:

«Մետաղական մակերեսի ընդարձակում 13.3%-ի սահմաններում 3.0 մմ տրամագծի դեպքում, 12.8%-ի սահմաններում 4.0մմ դեպքում: Լայնացումից առաջացած կարճացում - 0% 3.0 x 18 ՍՍ ստենտի համար: Անկախ լայնացման աստիճանից չի գերազանցում ստենտի երկարության 5%: Հետագա տեղաշարժման հավանականությունը ոչ ավելի քան 4.4 %, 3.0 x 18մմ ստենտի համար»: Սա նույնպես կլինիկական փորձաքննության տվյալներ են, որը կարող է տրամադրել բացառապես կոնկրետ արտադրող ընկերություն: Եթե նույն գնման առարկան այլ արտադրողի կողմից ներկայացվի տրամաբանական է, որ կունենա այլ տվյալներ, բայց կապահովի միևնույն ցանկալի արդյունքը և ֆունկցիոնալ առումով կապահովի նույն ակնկալիքը:

21-րդ չափաբաժնով անգիոպլաստիկայի նյութեր (դեղապատ ստենտ) գնման առարկայի բնութագրով պատվիրատուն նշել է «ճոճերի բացվածքը ոչ ավելի քան 131 աստիճան» սա կրկին հստակ թիվ է, մինչդեռ պետք է նշվեր միջակայք: Սույն չափաբաժնում կրկին նշվել է դեղանյութը՝ «Սիրոլիմուս՝ օժտված բարձր լիպոֆիլությամբ, որի դոզավորումը չպետք է լինի ավել քան 3.9մ գրամ մմ ստենտի երկարության վրա»: Մինչդեռ պետք է նշվեր լիմուս ընտանիքի դեղանյութ, իսկ նշված գրամի դեպքում այն առավել քան հղում է կոնկրետ ընկերության կողմից արտադրվող ստենտի:

22-րդ չափաբաժնով ներկայացված է բալոնային կաթետորի բնութագիրը, որտեղ նշված է կաթետորի երկարությունը 143սմ, որը տարբեր արտադրողների մոտ լինում են տարբեր, սակայն ֆունկցիոնալ առումով թույլ են տալիս հասնել նույն արդյունքին ինչպես նշված է տեխնիկական բնութագրում: Եթե մասնակցի կողմից առաջարկվի 141 կամ 142 կամ 144 երկարություն, ապա դա չի կարող ֆունկցիոնալ առումով խոչընդոտ ստեղծել կիրառման համար, մինչդեռ՝ հստակ թիվ նշելով պատվիրատուն սահմանափակում է շատ ու շատ ընկերությունների մասնակցությունը:

Նույն չափաբաժնում բալոնային նյութը նշված է «Պեբակս», որը կրկին սահմանափակում է: Եթե պահանջվող գնման առարկան ներկայացվի այլ նյութով այն կրկին չի կարող չհամապատասխանել տվյալ ապրանքի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը:

24-րդ չափաբաժնով ներկայացված բալոնային կաթետորի բնութագրով կրկին ներկայացված է հստակ չափ, որը ենթարկվում է Ընկերության վերը նշված դիտարկմանը: Բնութագրով ներկայացված «Platinum Iridium» նյութը կրկին սահմանափակում է, եթե այլ նյութով ներկայացված լինի կրկին ֆունկցիոնալ առումով այն խնդրահարույց չի և ապահովում է սպասելի ցանկալի արդյունքը:

Ընկերությունը նշել է, որ 25-26 չափաբաժիններով նույն սահմանափակումներն են, որոց արդեն իսկ անդրարդարձ կատարվել է վերոհիշյալ չափաբաժիններով:

27-րդ չափաբաժնով պատվիրատուին անհրաժեշտ է ժամանակավոր կարդիոաստիմուլյատորի էլեկտրոդ MEDTRONIC սարքին համատեղելի, սակայն նշված չէ ո՞ր տեսակի ժամանակավոր սարքի համար, քանի որ այն ունի 2-3 տարատեսակ և նշված չեն էլեկտրոդն անհատականացնող հստակ չափորոշիչները:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 12.03.2019թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

**2. «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.**

«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 29.03.2019թ. ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ներկայացված բողոքով վիճարկվել են ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/2 ծածկագրով ներկայացված հրավերի տեխնիկական բնութագրի 5.15.17.20.21.22.23.24.25.26.27-րդ չափաբաժինները:

Պատվիրատուն հայտնել է, որ 5-րդ չափաբաժնով ներկայացված առարկությունները ընդունում է:

Պատվիրատուն հայտնել է, որ 17-րդ չափաբաժնով նշվել է, որ անհրաժեշտ են ուղղորդիչ կաթետորներ 55սմ, 90սմ, 95սմ և 125սմ, այսինքն նշել է այն չափերը, որոնցով հնարավորինս հեշտ է աշխատելը, իսկ օրենքում նշված չէ հստակ կետ, որը պարտադրում է երկարությունները ներկայացնել միջակայքով, առաջարկվել է 4/չորս/ տարբերակ, այսինքն ընտրության հնարավորությունը սահմանափակված չի եղել:

20-րդ չափաբաժնով անգիոպլաստիկայի նյութեր /դեղապատ ստենտ/ գնման առարկայի բնութագրում նշվել է, որ Պատվիրատուն ցանկանում է ստենտի ծածկը պատված լինի էվերոլիմուս դեղանյութով, որտեղ կոնկրետ արտադրողի հղում Պատվիրատուն չի կատարել, ընդամենը նշել է, որ ցանկանում է այդ դեղանյութով, քանի որ աշխատանքի ընթացքում Պատվիրատուն տեսել է, որ արդյունավետ է աշխատել այդ դեղածածկույթ ունեցող ստենտով, քանի որ որոշ կլինիկական դեպքերում անհրաժեշտ է լինում կոնկրետ այս դեղածածկույթով ստենտ/ օրինակ ստենտ ռեստենոզներ/ Պատվիրատուն նշել է, որ էվերոլիմուս դեղածածկույթով ստենտ ունեն մի շարք արտադրողներ, այսինքն Պատվիրատուն սահմանափակում չի կիրառել և հնարավորություն է տվել բոլորին ներկայացնելու իրենց արտադրանքը՝ օրենքին համապատասխան:

Պատվիրատուն նշել է, որ ինչ վերաբերում է ստենտի կառուցվածքին «2.25-3.0մմ տրամագծով ստենտն ունի երեք կարճ և երեք երկար ամրակներ միացած ոչ գծային կապով: 30.5-4.0մմ ստենտն ունի երեք կարճ և վեց երկար ամրակներ»>> պարբերություններին, ապա Պատվիրատուն փաստում է, որ այս պարամետրերը

պայմանավորում են ստենտի ֆիզիկոմեխանիկական հատկությունները, որոնք շատ դեպքերում /ստենտի ռադիալամրություն, անցանելիությունը, ճկունությունը/ այլ պարամետրերով չափելի չեն և պնդումը, որ այլ կառուցվածքով և չափորոշիչներով ստենտը կապահովվի միևնույն ցանկալի արդյունքը ճիշտ չէ:

21-րդ չափաբաժնով նշված անգիոպլաստիկայի նյութերի գնման առարկայի բնութագրում նշված ճոճերի բացվածքը ոչ ավելի քան 131 աստիճան, Պատվիրատուն նշել է, որ որ սա հստակ թիվ չէ, քանի որ Պատվիրատուն գրել է ոչ ավելի քան միջակայքը այսինքն՝ ոչ մի սահմանափակում չի նշել, իսկ ինչ վերաբերվում է <<Սիրոլիմուս>> դեղանյութով ստենտին, արդեն իսկ նշվել է, որ Պատվիրատուն կոնկրետ արտադրողի հղում չի կատարել, ընդամենը նշել է, որ ցանկանում է այդ դեղանյութով, քանի որ աշխատանքի ընթացքում տեսել է, որ արդյունավետ է աշխատել այդ դեղածածկույթ ունեցող ստենտով, քանի որ որոշ կլինիկական դեպքերում անհրաժեշտ է լինում կոնկրետ այս դեղածածկույթով ստենտ/ օրինակ ստենտ ռեստենոզներ/ նշվել է նաև որ սիրոլիմուս դեղածածկույթով ստենտ ունեն մի շարք արտադրողներ, այսինքն՝ Պատվիրատուն սահմանափակում չի կիրառել և հնարավորություն է տվել բոլորին ներկայացնելու իրենց արտադրանքը՝ օրենքին համապատասխան, Պատվիրատուն նշել է, որ իսկ ինչ վերաբերվում է դեղանյութի դոզավորմանը, ապա նշված է միջակայք:

22-րդ չափաբաժնով ներկայացված բալունային կաթետորի բնութագրով նշված են երկարություններ 143սմ և 145սմ, այս երկարություններով կաթետորներ արտադրում են մեկից ավելի ընկերություններ՝ օրինակ Terumo, Boston Scientific, Abbott և այլն, ինչնել ենթադրում է, որ Պատվիրատուն հստակ արտադրողի հղում չի կատարել և կարող են մասնակցել մեկից ավելի ընկերություններ:

Ինչ վերաբերվում է չափաբաժնում նշված <<Պեբակս>> նյութին, ապա Պատվիրատուն նշել է, որ նյութը որով պատրաստված է բալունը պայմանավորում է նրա հատկությունները (դա նույն է, որ օրինակ դուռ պատվիրելիս պահանջ ներկայացվեր, որ դուռը լինի երկաթե, բայց մեկ այլ ընկերություն առաջարկում է փայտե, չէ որ այս դեպքում այն թե ինչից է պատրաստված դուռը էական նշանակություն ունի և պայմանավորում է այդ դռան որակը), նույնն է նաև <<Պեբակս>> նյութով պատրաստված բալունի համար, ուստի էական է թե բալունը ինչ նյութով է պատրաստված:



Պատվիրատուն նշել է, որ վերոնշյալ հիմնավորումները վերաբերում են նաև 24 և 26 չափաբաժնով ներկայացված դիտարկումներին:

25-րդ չափաբաժնով նշված սահմանափակումները ներկայացված են միջակայքերով:

Պատվիրատուն 27-րդ չափաբաժնով ներկայացված առարկությունները ընդունում է:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 12.03.2019թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստին:

**3. ԳԲՔԱ-ԱՄ-2019/36 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

ԳԲՔԱ-ԱՄ-2019/36 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ):

2. Ընթացակարգի 5, 15, 17, 20, 21, 22, 23, 24, 25, 26 և 27-րդ չափաբաժինների մասով նախատեսվել են հետևյալ տեխնիկական բնութագրերը.

5	Կաթետերներ/ Ախտորոշիչ կատետեր	Հավաքածուն կազմված է երկու ախտորոշիչ կաթետերներից՝ չվնասող, ռենտգենկոնտրաստ դիստալ ծայրով, կաթետերի ներքին լուսանցք է՝ 4F; 5F; 5.2 F; 6F մաքսիմալ ճնշումը 1200psi: Արյան ծավալային հոսքի արագությունն է՝ 16,7 մլ/վ - 4F; 21,3 մլ/վ- 5F; 21 մլ/վ- 5,2F, 35 մլ/վ- 6F. կաթետերի համար: Չափսերն են՝ 4F, 5F, 6F, Կաթետերների ծայրը JR4, JL4, 3DRC, JL3.5: Նյութը նեյլոն, ունի պողպատյա հյուսապատում, որը օժտում է կաթետերին ամրությամբ և ունի առավելագույն ռենտգենկոնտրաստ ծայր: CE որակի սերտիֆիկատի առկայություն:
15	Կաթետերներ Դիագնոստիկ կատետեր	Կաթետերի նյութը նեյլոն/պոլիուրետան , ունի պողպատյա հյուսապատում, որը օժտում է կաթետերին ամրությամբ և ռենտգենկոնտրաստությամբ: Ունի չվնասող, ռենտգենկոնտրաստ դիստալ ծայր, կաթետերի ներքին լուսանցք է՝ 4F; 5F; 5.2 F; 6F մաքսիմալ ճնշումը 1200psi: Արյան ծավալային հոսքի արագությունն է՝ 16,7 մլ/վ - 4F; 21,3 մլ/վ- 5F; 21 մլ/վ- 5,2F, 35 մլ/վ- 6F. կաթետերի համար: Կաթետերի ծայրի ձևերը՝ JL 3,5; JL4; JL4,5; JL5; JL6; AL1; AL2; AL3; JR3,5; JR4; JR4 MOD; JR5; JR5 MOD; JR6; AR MOD; AR1 MOD; AR2 MOD; 3DRS; SRC; MPA1; MPA1; MPB2; MPB3; SON1; SON2; SON3; CAS1; CAS2; CAS3; BARBEAU; EGB1; EGB2; EGB3; LCB; RCB; IM; PIG; PIG145; PIG155; NIH;UNIV; STR; C1; C2; C3; Renal Double Curve Small; Renal Double Curve

		<p>Adult; Shepherd Hook 1; Shepherd Hook 2; Celiac Trunk; Uni Select; J-Curvel; J-Curvel 1; J-Curvel 2; SIM1; SIM2; SIM3; SIM4; H1; H3; HN3; HN4; MAN; BERN; BERN 2; JB1; JB2; JB3; VERT; N.I.H., RBL Կաթետերի երկարությունը 65 սմ; 80սմ; 100սմ; 125սմ:</p> <p>Կաթետերի դիստալ սեգմենտի բազմաձևվությունը ապահովվում է անոթի ընտրողական կաթետերիզացիա: Նյութը ապահովում է կաթետրի ճկունությունը՝ համապատասխան անոթի: CE որակի սերտիֆիկատի առկայություն: համապատասխան Որակի սերտիֆիկատների առկայություն</p>
17	Կաթետերներ/ Ուղղորդիչ կատետեր	<p>Արտաքին շերտը նեյլոնից է, միջին շերտը՝ երկշերտ հյուսապատված պողպատ - ներքին շերտը PTFE(պոլիտետրաֆտորէտիլեն), ռենտգենկոնտրաստ դիստալ ծայրով, որի երկարությունն է 2,3-2,5մմ կամ 16մմ:</p> <p>Բազմահատվածային կառուցվածք, տարբեր հատվածների ջերմաձուլում (փափուկ ծայրի, ձ-վավորող մասի, հիմնական մարմնի): Ծայրը փափուկ է, ճկուն - չվնասող (ատրապմատիկ): Հյուսապատման Քիիթրիդ տեխնոլոգիանՄՆ ավելացնում է կաթետերի ներքին լուսանցը - աջակցում է մանիպուլյացիայի պրոցեսին: Կաթետերի պատի մետաղապատումը պողպատյա ցանցով խոչնդոտում է գործիքի ծալմանը անոթների անատրոմիական ծալքերի տեղում: Կաթետերները ունեն հավասարաչափ ներքին լուսանցք ամբողջ երկայնքով: Ներքին լուսանցքի չափերն են՝ 9F ՎՆ 0.098ՄՆ, 8F-0.088ՄՆ, 7F-0.078ՄՆ, 6F-0.070: Երկարությունն է 55սմ, 90սմ, 95սմ, 125սմ: Կաթետերի ծայրի ձևերը՝ JL3; JL3 SH; JL3,5; JL3,5 SH; JL3,5 ST; JL3,5 ST SH; JL4; JL4 ST; JL4 SH; JL4 ST SH; JL4,5; JL4,5 ST; JL4,5 SH; JL5; JL5 ST; JL5 SH; JL5 ST SH; JL6; JL3,5 MOD ST; JL4 MOD ST; JCL3,5; JCL 3,5 SH; JCL4; JCL4 SH; JCL4,5; JCL4,5 SH; JCL5 SH; XB3; XB3 SH; XB3,5; XB3,5 SH; XBLAD 3,5; XB4; XB4SH; XB LAD4; XB4,5; XB4,5 SH; XB LAD 4,5; AL.75; AL1; AL1ST; AL1 ST SH; AL1SH; AL 1,5; AL 1,5 ST; AL1,5 SH; AL 1,5 ST SH; AL2; AL2 ST; AL2 SH; AL2 ST SH; AL3; AL3 ST; AL3 SH; JR3,5; JR 3,5 ST; JR 3,5 SH; JR 3,5 ST SH; JR 4; JR4 ST; JR4 SH; JR4 ST SH; ; SPB 3,5, SPB 3,0, PB 3,5, JR 4,5 ST; JR 4,5 ST SH; JR5; JR5 ST; JR5 SH; JR 6; JR6 SH; JCR 3,5; JCR 3,5 SH; JCR 4; JCR 4 SH; SCR3,5; SCR4; XBR1; XBR2; XBR CA; 3 DRC; AR1; AR1 SH; AR2; AR2 SH; ALR1,2; ALR 1,2 SH; NR4; JFL; JFL ST; JFL LT; JFR; JFR ST; RB; SON1; CAS1; CAS2; MPA1; MPA 1 SH; MPB1; MPB1 SH; H- STICK; H-STICK SH; LCB; LCB SH; RCB; RCB SH</p>
20	անգիոպլաստ իկայի նյութեր/դեղա պատ ստենա/	<p>Ստենտի նյութը և կառուցվածքը - լազերով կտրված կոբալտ-քրոմի համաձուլվածքից (L-605) կազմված գլան, ստենտի ծածկը - Էվերոլիմուս դեղանյութ արտազատող ծածկ: Ստենտի կառուցվածքը - : 2.25-3.0 մմ տրամագծով ստենտն ունի երեք կարճ - երեք երկար ամրակներ՝ միացած ոչ գծային կապով: 3.5-4.0 մմ- ոց ստենտն ունի երեք կարճ - վեց երկար ամրակներ՝ միացած ոչ գծային կապով: Ստենտի եզրային օղը ձ-ավորված է սիմետրիկ ամրակներով՝ բարելավելու ուղղորդիչ կաթետերի դուրսբերումը: Ստենտի պատերի հաստությունը - ոչ ավել քան 0.0032ՄՆ: Ստենտի երկայնաձիգ ճկունությունը՝ գերազանց: Ստենտը ոչ ֆեռոմագնիսական և ունի բարձր ճառագայթային ուժ: Մետաղական մակերեսի ընդարձակում - 13.3%-ի սահմաններում 3.0 մմ տրամագծի դեպքում, 12.8%-ի սահմաններում՝ 4.0 մմ-ի դեպքում: Լայնացումից առաջացած կարճացում - 0% 3.0 x 18 մմ ստենտի համար: Անկախ լայնացման աստիճանից չի գերազանցում ստենտի երկարության 5%: Հետագա տեղաշարժման հավանականությունը ոչ ավել քան 4.4%, 3.0 x 18 մմ ստենտի համար: Առկա ստենտերի տրամագծերը - 2.0, 2.25, 2.5, 2.75, 3.0, 3.5, 4.0 մմ: Բացված ստենտի մաքսիմալ տրամագիծը - 2.0-2.5-ը մինչև 3.25 մմ, 2.75-3.0-ը մինչև 3.75 մմ, 3.5-4.0-ը մինչև 4.5 մմ: Առկա ստենտերի երկարությունները - 8, 12, 15, 18, 23, 28 մմ (2.0, 2.25, 2.5, 2.75, 3.0, 3.5, 4.0 մմ տրամագծերի դեպքում), 8, 12, 15, 18, 23, 28, 33, 38 մմ (2.5, 2.75, 3.0, 3.5, 4.0 մմ տրամագծերի դեպքում): Ստենտի բացման նոմինալ ճնշումը՝ 11 atm պայթման առավելագույն ճնշումը՝ 18 atm (բոլոր տրամագծերի ստենտերի համար): Անցման պրոֆիլը՝ 0.0425" (3.0 x 18), ծայրի մուտքի պրոֆիլը՝ 0.017": Բալունի միջին չափսը - 0.041 դույմ կամ 1.04 մմ՝ 3.0x18 մմ ստենտի համար: Բալունը բարակ երկակի շերտով, նյութը՝ բազմաշերտակա: Ուղղորդիչ կաթետերի ներքին նվազագույն տրամագիծը - 0.056 դույմ կամ 1.4 մմ (բոլոր չափսի ստենտերի համար): Ստենտի</p>

		<p>դեղորայքային ծածկը բաղկացած է ակրիլային – ֆլյուրո պոլիմերներից, որոնք օգտագործվում են են անոթային կարի համար նախատեսված թելերի արտադրությունում: Դեղանյութի կոնցենտրացիան ստենտի մակերեսին - 88 բգ: ISO13485, CE-MARK և ծագման սերտիֆիկատների առկայություն: Ստենտը գործարանային ստերիլ փաթեթավորմամբ է: Դեղապատ ստենտ: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75% , 1-2 տարի պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս: Ապրանքը պետք է լինի նոր չօգտատրծված գործարանային փաթեթավորմամբ:</p>
21	անգիոպլաստիկայի նյութեր/դեղապատ ստենտ/	<p>Նյութը՝ կոբալտ քրոմի հեմոհամատեղել համաձուլվածք: Դեղապատ ստենտը նաձագծված լինի բաց դիզայնի տիպով , ճոճերի բացվածքը ոչ ավել քան 131 աստիճան: Աշխատանքային երկարությունը՝ ոչ պակաս քան 144սմ: Կիրառվող նյութեր պոլիմեր՝ հեմոհամատեղելի: Բալունի (կաթետերի) նյութ՝ Nyylon 12 : Կիրառվող դեղանյութը՝ Սիրոլիմուս՝ օժտված բարձր լիպոֆիլությամբ, որի դոզավորումը չպետք է լինի ավել քան 3.9մգրամ մմ ստենտի երկարության վրա: Կիրառվող դեղանյութը պատած լինի միայն ստենտի արտաքին մակերեսին և ոչ ստենտի ցանցի հատման կետերում: Դեղանյութի և պոլիմերի ձերբազատումը՝ առավելագույնը 4 ամսում՝ 100%: Կախված վիրահատության ժամանակ հիվանդի անոթի առանձնահատկություններից՝ ըստ պահանջվող տրամագծի՝ 2-4 մմ տիրույթի միջակայքում ըստ պահանջվող երկարությունների՝ 9-38 մմ տիրույթի միջակայքում Ստենտի պատերի հաստությունը՝ 0.003"- 0.0036" տիրույթի միջակայքում: Միջազգային ISO13485, CE MARK, որակի վկայականների առկայություն: Ստենտը պետք է լինի նոր չօգտատրծված գործարանային ստերիլ փաթեթավորմամբ, պետք է ներառի ստենտի տեխնիկական ցուցանիշները, առանձնահատկություններն և օգտագործման կանոնները՝ գործարանային ձեռնարկի ձևով: Հանձման պահին ամբողջ պիտանելիության ժամկետի 75%-ի առկայություն: Պատվիրատուի կողմից նշված վերջնական օգտագործողը իրավունք ունի վերադարձնել կամ փոխել ստացված չափը այլ չափսով՝ ըստ անհրաժեշտության, միայն մինչև մատակարարված ապրանքի ամբողջ պիտանելիության ժամկետի նվազագույնը 50%-ի առկայության դեպքում: Հակառակ դեպքում մատակարարն իրավունք ունի պահանջել վճարել մատակարարված ապրանքի համար:</p>
22	բալունային կաթետերներ	<p>Բալունային կաթետր (NC), 0,014", կաթետրի երկարությունը՝ 143 սմ: Բալունի նյութը՝ Պեբակս: Կրկնակի հիդրոֆիլային ծածկույթ: Բալունի կրկնակի շերտ՝ 3,5-5,0մմ չափսերի համար: Բալունի նոմինալ բացման ճնշումը՝ 12 մթն, պայթման առավելագույն ճնշումը՝ 18 մթն, ծայրի պրոֆիլը՝ 0,018" (0.45), ծայրի երկարությունը՝ ոչ ավել 3,74 մմ, շաֆթի պրոքսիմալ/դիստալ մասի տրամագիծը՝ 2,2/2,5F: Շաֆթի մեջ ինտեգրված վոլֆրամային ռենտգեն-կոնտրաստ նշանակիրներ 1,1 մմ երկարությամբ: Տրամագիծը-1.5, 2.0, 2.25, 2.5,2.75, 3.0, 3.25, 3.5, 3.75, 4.0, 4.5, 5.0 մմ, երկարությունը - 6, 8, 12, 15, 20, 25 մմ: Բալունային կաթետր (RX), 0,014", կաթետրի երկարությունը՝ 145 սմ: Բալունի նյութը՝ Պեբակս: Արտաքին հատվածում կրկնակի հիդրոֆիլային ծածկույթ և հիդրոֆոբային ծածկույթ՝ կաթետրի հատվածում: Բալունի կրկնակի շերտի հաստությունը՝ ոչ ավել քան 0,0014" (0.036 մմ) 2,25-5,0մմ չափսերի համար: Բալունի նոմինալ բացման ճնշումը՝ 8 մթն, պայթման առավելագույն ճնշումը՝ 14 մթն, ծայրի պրոֆիլը՝ 0,017" (0.43), ծայրի երկարությունը՝ ոչ ավել 3մմ, շաֆթի պրոքսիմալ/դիստալ մասի տրամագիծը՝ 2,1/2,4F: Շաֆթի մեջ ինտեգրված վոլֆրամային ռենտգեն-կոնտրաստ նշանակիրներ 1,0 մմ երկարությամբ: Տրամագիծը-1.2, 1.5, 2.0, 2.25, 2.5,2.75, 3.0, 3.25, 3.5, 3.75, 4.0, 4.5, 5.0 մմ, երկարությունը - 6, 8, 12, 15, 20, 25, 30 մմ: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելիության ժամկետ ունեցող</p>

		ապրանքների համար առնվազն՝ 75% , 1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս: Ապրանքը պետք է լինի նոր չօգտաործված գործարանային փաթեթավորմամբ:
23	բալոնային կաթետերներ	Բալոն չընդլայնվող գնդանոթով, կատետերի երկարությունը 145սմ, հիդրոֆիլիկ ծածկույթով, X քրթինգ ծածկույթով աշխատանքային հատվածում, նոմինալ ճնշումը 1216ԿՊա, Մաքսիմալ ճնշումը 2229ԿՊա 2.0-ից 4.0մմ տրամագծով բալոնների համար, 2026ԿՊա 4.5մմ-ից 5.0մմ տրամաբծով բալոնների համար,: բալոնները եռաթև են: Մուտքի ծայրի տրամագիծը 0.43մմ: Կախված վիրահատվող անոթի տրամագծի չափից կաթետերի պահանջվող չափերն են ըստ տրամագծի՝ 2.0; 2.25; 2.5; 2.75; 3.0; 3.25; 3.5; 3.75; 4.0; 4.5; 5.0 մմ: Կախված անոթի վնասված մասի չափերից կաթետերի պահանջվող չափերն են ըստ երկարության՝ 6մմ; 8.0; 12մմ; 15մմ; 20մմ; 25մմ; 30մմ:
24	բալոնային կաթետերներ	Ընդլայնվող գնդանոթով բալոն ,կատետերի երկարությունը 142սմ, Platinum Iridium, փակված վիճակում 1.25-1.5-ի համար 0.022", մնացած չափերի համար 0.24" պրոքսիմալ հատվածում 1.98FR չափ, Դիստալ հատվածում 2.4-2.7, Նոմինալ ճնշումը 7մթն , մաքսիմալը 14-16 մթն. կախված չափերից բալոն նախատեսված դիլատացիայի համար: չափերը՝ տրամագիծ՝ 1.25,1.5,2.0,2.25,2.5,2.75,3.0,3.5,4.0,4.5մմ: երկարություն՝ 6,9,12,14,15,17,20,25,30,33,38,41մմ: Ֆորմատ- հատ, Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի առկայություն, Ֆիրմային նշանի առկայությունը:
25	Դաստակի ճնշող կապ	Ռադիալ զարկերակի փակիչ: Տեղադրվում է դաստակից 3-4սմ հեռավորության վրա: Նոմինալ օդի ծավալը ոչ պակաս 13մլ, մաքսիմալ օդի ծավալը ոչ ավել 18մլ: Կախված վիրահատվող հիվանդի դաստակի չափերից ռադիալ զարկերակի փակիչի պահանջվող չափերն են՝ սովորական (M չափսի) և L-չափսի:Միջազգային ISO13485, CE MARK որակի վկայականների առկայություն: Պետք է լինի գործարանային փաթեթավորմամբ որը պետք է տեղադրված լինի տուփի մեջ: Հանձման պահին ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն 75%-ի առկայություն: Պատվիրատուի կողմից նշված վերջնական օգտագործողը իրավունք ունի վերադարձնել՝ ըստ անհրաժեշտության, միայն մինչև մատակարարված ապրանքի ամբողջ պիտանելիության ժամկետի նվազագույնը 50%-ի առկայության դեպքում: Հակառակ դեպքում մատակարարն իրավունք ունի պահանջել վճարել մատակարարված ապրանքի համար:
26	Թրոմբոսպլիրացիոն կաթետեր	"Ասպիրացիոն կաթետեր, դիստալ չափը 1.7մմ, պրոքսիմալ 1.4մմ: Մակերևույթը՝ քաշող դիստալ մասում 0.79մմ2., պրոքսիմալ հատվածում 0.95մմ2. մուտքի պրոֆիլը 0.019"": Հիդրոֆիլիկ ծածկույթ 40սմ, աշխատող սեգմենտը RX= 23սմ: Ցանկացած մատակարարված խմբաքանակի համար CE MARK որակի վկայականները առկա են: Նոր է , չօգտագործված, գործարանային ստերիլ փաթեթավորմամբ: Ներառում է տեխնիկական ցուցանիշները, առանձնահատկությունները և օգտագործման կանոնները՝ գործարանային ձեռնարկի ձևով: Հանձնելու պահին առկա է պիտանելիության ժամկետի 70%-ը:
27	Ժամանակավոր կարդիոաստի մույլատորի էլեկտրոդ	Ժամանակավոր կարդիոաստիմուլյատորի էլեկտրոդ MEDTRONIC սարքին համատեղելի Հանձնելու պահին առկա է պիտանելիության ժամկետի 70%-ը:

#### 4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից 06.03.2019թ. ներկայացված բողոքը և կից փաստաթղթերը, «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 29.03.2019թ. գրությունը, «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառության (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

**5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:**

«Կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 22-րդ կետի համաձայն՝ **գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ՝** բացառությամբ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված պայմաններով գնում կատարելու դեպքերի:

«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի 5, 15, 17, 20, 21, 22, 23, 24, 25, 26 և 27-րդ չափաբաժինների մասով նախատեսվել են հետևյալ տեխնիկական բնութագրերը.

5	Կաթետերներ/ Ախտորոշիչ կատետեր	Հավաքածուն կազմված է երկու ախտորոշիչ կաթետերներից՝ չվնասող, ռենտգենկոնտրաստ դիստալ ծայրով, կաթետերի ներքին լուսանցք է՝ 4F; 5F; 5.2 F; 6F մաքսիմալ ճնշումը 1200psi: Արյան ծավալային հոսքի արագությունն է <b>16,7 մլ/վ - 4F; 21,3 մլ/վ- 5F; 21 մլ/վ- 5,2F, 35 մլ/վ- 6F.</b> Կաթետերի համար: Չափսերն են՝ 4F, 5F, 6F, Կաթետերների ծայրը JR4, JL4, 3DRC, JL3.5: Նյութը նեյլոն, ունի պողպատյա հյուսապատում, որը օժտում է կաթետերին ամրությամբ և ունի ատրավմատիկ ռենտգենկոնտրաստ ծայր: CE որակի սերտիֆիկատի առկայություն:
15	Կաթետերներ Դիագնոստիկ կատետեր	Կաթետերի նյութը նեյլոն/պոլիուրետան , ունի պողպատյա հյուսապատում, որը օժտում է կաթետերին ամրությամբ և ռենտգենկոնտրաստությամբ: Ունի չվնասող, ռենտգենկոնտրաստ դիստալ ծայր, կաթետերի ներքին լուսանցք է՝ 4F; 5F; 5.2 F; 6F մաքսիմալ ճնշումը 1200psi: Արյան ծավալային հոսքի արագությունն է <b>16,7 մլ/վ - 4F; 21,3 մլ/վ- 5F; 21 մլ/վ- 5,2F, 35 մլ/վ- 6F.</b> Կաթետերի համար: Կաթետերի ծայրի ձևերը՝ JL 3,5; JL4; JL4,5; JL5; JL6; AL1; AL2; AL3; JR3,5; JR4; JR4 MOD; JR5; JR5 MOD; JR6; AR MOD; AR1 MOD; AR2 MOD; 3DRS; SRC; MPA1; MPA1; MPB2; MPB3; SON1; SON2; SON3; CAS1; CAS2; CAS3; BARBEAU; EGB1; EGB2; EGB3; LCB; RCB; IM; PIG; PIG145; PIG155; NIH;UNIV; STR; C1; C2; C3; Renal Double Curve Small; Renal Double Curve Adult; Shepherd Hook 1; Shepherd Hook 2;Celiac Trunk; Uni Select; J-Curvel; J-Curvel 1; J-Curvel 2; SIM1; SIM2; SIM3; SIM4; H1; H3; HN3; HN4; MAN; BERN; BERN 2; JB1; JB2; JB3; VERT; N.I.H., RBL Կաթետերի երկարությունը <b>65 սմ; 80սմ; 100սմ; 125սմ:</b> Կաթետերի դիստալ սեգմենտի բազմաձևվությունը ապահովվում է անոթի ընտրողական կաթետերիզացիա: Նյութը ապահովում է կաթետերի ճկունությունը՝ համապատասխան անոթի: CE որակի սերտիֆիկատի առկայություն:համապատասխան Որակի սերտիֆիկատների առկայություն
17	Կաթետերներ/ Ուղղորդիչ կատետեր	Արտաքին շերտը նեյլոնից է, միջին շերտը՝ երկշերտ հյուսապատված պողպատ - ներքին շերտը PTFE(պոլիտետրաֆտորէտիլեն), ռենտգենկոնտրաստ դիստալ ծայրով, որի երկարությունն է 2,3-2,5մմ կամ 16մմ: Բազմափառվածային կառուցվածք, տարբեր հատվածների շերտաձևում (փափուկ ծայրի, ձ-վավորող մասի, հիմնական մարմնի): Ծայրը փափուկ է, ճկուն - չվնասող (ատրավմատիկ): Հյուսապատման Քիիբրիդ տեխնոլոգիանՄՆ ավելացնում է կաթետերի ներքին լուսանցք - աջակցում է մանիպուլյացիայի պրոցեսին:Կաթետերի պատի մետաղապատումը պողպատյա ցանցով խոչնդոտում է գործիքի ծալմանը անոթների անատրմիական ծալքերի տեղում: Կաթետերները ունեն հավասարաչափ ներքին լուսանցք ամբողջ երկայնքով: Ներքին լուսանցքի չափերն են՝ 9F ՎՆ 0.098ՄՆ, 8F-0.088ՄՆ, 7F-0.078ՄՆ, 6F-0.070: Երկարությունն է <b>55սմ, 90սմ,95սմ, 125սմ:</b> Կաթետերի ծայրի ձևերը՝ JL3; JL3 SH; JL3,5; JL3,5 SH; JL3,5 ST;JL3,5 ST SH; JL4; JL4 ST; JL4 SH; JL4 ST SH; JL4,5; JL4,5 ST;JL4,5 SH; JL5; JL5 ST; JL5 SH; JL5 ST SH; JL6; JL3,5 MOD ST; JL4 MOD ST; JCL3,5; JCL 3,5 SH; JCL4; JCL4 SH; JCL4,5; JCL4,5 SH; JCL5 SH; XB3; XB3 SH; XB3,5; XB3,5 SH; XBLAD 3,5; XB4; XB4SH; XB LAD4; XB4,5; XB4,5 SH; XB LAD 4,5; AL.75; AL1; AL1ST; AL1 ST SH; AL1SH; AL 1,5; AL 1,5 ST; AL1,5 SH; AL 1,5 ST SH; AL2; AL2 ST; AL2 SH; AL2 ST SH; AL3; AL3 ST; AL3 SH; JR3,5; JR 3,5 ST; JR 3,5 SH; JR 3,5 ST SH; JR 4; JR4 ST; JR4 SH; JR4 ST SH; ; SPB 3,5, SPB 3,0, PB 3,5, JR 4,5 ST; JR 4,5 ST SH; JR5; JR5 ST; JR5 SH; JR 6; JR6 SH; JCR 3,5; JCR 3,5 SH; JCR 4; JCR 4 SH; SCR3,5; SCR4; XBR1; XBR2; XBR CA; 3 DRC; AR1; AR1 SH; AR2; AR2 SH; ALR1,2;

		<p>ALR 1,2 SH; NR4; JFL; JFL ST; JFL LT; JFR; JFR ST; RB; SON1; CAS1; CAS2; MPA1; MPA 1 SH; MPB1; MPB1 SH; H- STICK; H-STICK SH; LCB; LCB SH; RCB; RCB SH</p>
20	անգիոպլաստիկայի նյութեր/դեղապատ ստենա/	<p>Ստենտի նյութը և կառուցվածքը - լազերով կտրված կոբալտ-քրոմի համաձուլվածքից (L-605) կազմված զլան, ստենտի ծածկը - Էվերոլիմուս դեղանյութ արտազատող ծածկ: Ստենտի կառուցվածքը - : 2.25-3.0 մմ տրամագծով ստենտն ունի երեք կարճ - երեք երկար ամրակներ՝ միացած ոչ գծային կապով: 3.5-4.0 մմ-ոց ստենտն ունի երեք կարճ - վեց երկար ամրակներ՝ միացած ոչ գծային կապով: Ստենտի եզրային օղը ձ-ավորված է սիմետրիկ ամրակներով՝ բարելավելու ուղղորդիչ կաթետերի դուրսբերումը: Ստենտի պատերի հաստությունը - ոչ ավել քան 0.0032ՄՆ: Ստենտի երկայնաձիգ ճկունությունը գերազանց: Ստենտը ոչ ֆեռոմագնիսական և ունի բարձրճառազայթային ուժ: Մետաղական մակերեսի ընդարձակում - 13.3%-խաահմաններում 3.0 մմ տրամագծի դեպքում, 12.8%-ի սահմաններում՝ 4.0 մմ-ի դեպքում: Լայնացումից առաջացած կարճացում - 0% 3.0 x 18 մմ ստենտի համար: Անկախ լայնացման աստիճանից չի գերազանցում ստենտի երկարության 5%: Հետագա տեղաշարժման հավանականությունը ոչ ավել քան 4.4%, 3.0 x 18 մմ ստենտի համար: Առկա ստենտերի տրամագծերը - 2.0, 2.25, 2.5, 2.75, 3.0, 3.5, 4.0 մմ: Բացված ստենտի մաքսիմալ տրամագիծը - 2.0-2.5-ը մինչև 3.25 մմ, 2.75-3.0-ը մինչև 3.75 մմ, 3.5-4.0-ը մինչև 4.5 մմ: Առկա ստենտերի երկարությունները - 8, 12, 15, 18, 23, 28 մմ (2.0, 2.25, 2.5, 2.75, 3.0, 3.5, 4.0 մմ տրամագծերի դեպքում), 8, 12, 15, 18, 23, 28, 33, 38 մմ (2.5, 2.75, 3.0, 3.5, 4.0 մմ տրամագծերի դեպքում): Ստենտի բացման նոմինալ ճնշումը՝ 11 atm պայթման առավելագույն ճնշումը՝ 18 atm (բոլոր տրամագծերիստենտերի համար): Անցման պրոֆիլը՝ 0.0425" (3.0 x 18), ծայրի մուտքի պրոֆիլը՝ 0.017": Բալունի միջին չափսը - 0.041 դույմ կամ 1.04 մմ՝ 3.0x18 մմ ստենտի համար: Բալունը բարակ երկակի շերտով, նյութը բազմաշերտապեբաբա: Ուղղորդիչ կաթետերի ներքին նվազագույն տրամագիծը - 0.056 դյույմ կամ 1.4 մմ (բոլոր չափսի ստենտերի համար): Ստենտի դեղորայքային ծածկը բաղկացած է ակրիլային - ֆլյուրո պոլիմերներից, որոնք օգտագործվում են են անոթային կարի համար նախատեսված թելերի արտադրությունում: Դեղանյութի կոնցենտրացիան ստենտի մակերեսին - 88 րգ: ISO13485, CE-MARK և ծագման սերտիֆիկատների առկայություն: Ստենտը գործարանային ստերիլ փաթեթավորմամբ է: Դեղապատ ստենտ: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75% , 1-2 տարի պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս: Ապրանքը պետք է լինի նոր չօգտատրծված գործարանային փաթեթավորմամբ:</p>
21	անգիոպլաստիկայի նյութեր/դեղապատ ստենտ/	<p>Նյութը՝ կոբալտ քրոմի հեմոհամատեղել համաձուլվածք: Դեղապատ ստենտը նաձագծված լինի բաց դիզայնի տիպով , ճոճերի բացվածքը ոչ ավել քան 131 աստիճան: Աշխատանքային երկարությունը՝ ոչ պակաս քան 144սմ: Կիրառվող նյութեր պոլիմեր՝ հեմոհամատեղելի: Բալունի (կաթետերի) նյութ՝Nyylon 12 : Կիրառվող դեղանյութը՝ Սիրոլիմուս՝ օժտված բարձր լիպոֆիլությամբ, որի դոզավորումը չպետք է լինի ավել քան 3.9մգրամ մմ ստենտի երկարության վրա: Կիրառվող դեղանյութը պատած լինի միայն ստենտի արտաքին մակերեսին և ոչ ստենտի ցանցի հատման կետերում: Դեղանյութի և պոլիմերի ձերբազատումը՝ առավելագույնը 4 ամսում՝ 100%: Կախված վիրահատության ժամանակ հիվանդի անոթի առանձնահատկություններից՝ ըստ պահանջվող տրամագծի՝ 2-4 մմ տիրույթի միջակայքում ըստ պահանջվող երկարությունների՝ 9-38 մմ տիրույթի միջակայքում Ստենտի պատերի հաստությունը՝ 0.003"- 0.0036" տիրույթի միջակայքում: Միջազգային ISO13485, CE MARK, որակի վկայականների առկայություն: Ստենտը պետք է լինի նոր չօգտատրծված գործարանային ստերիլ փաթեթավորմամբ, պետք է ներառի ստենտի տեխնիկական ցուցանիշները,</p>



		<p>առանձնահատկություններն և օգտագործման կանոնները՝ գործարանային ձեռնարկի ձևով: Հանձման պահին ամբողջ պիտանելիության ժամկետի 75%-ի առկայություն: Պատվիրատուի կողմից նշված վերջնական օգտագործողը իրավունք ունի վերադարձնել կամ փոխել ստացված չափը այլ չափսով՝ ըստ անհրաժեշտության, միայն մինչև մատակարարված ապրանքի ամբողջ պիտանելիության ժամկետի նվազագույնը 50%-ի առկայության դեպքում: Հակառակ դեպքում մատակարարն իրավունք ունի պահանջել վճարել մատակարարված ապրանքի համար:</p>
22	բալոնային կաթետերներ	<p>Բալոնային կաթետր (NC), 0,014", կաթետրի երկարությունը՝ <b>143 սմ</b>: Բալոնի նյութը՝ Պեբակս: Կրկնակի հիդրոֆիլային ծածկույթ: Բալոնի կրկնակի շերտ՝ 3,5-5,0 մմ չափսերի համար: Բալոնի նոմինալ բացման ճնշումը՝ 12 մթն, պայթման առավելագույն ճնշումը՝ 18 մթն, ծայրի պրոֆիլը՝ 0,018" (0.45), ծայրի երկարությունը՝ ոչ ավել 3,74 մմ, շաֆթի պրոքսիմալ/դիստալ մասի տրամագիծը՝ 2,2/2,5F: Շաֆթի մեջ ինտեգրված վոլֆրամային ռենտգեն-կոնտրաստ նշանակիրներ 1,1 մմ երկարությամբ: Տրամագիծը-1.5, 2.0, 2.25, 2.5,2.75, 3.0, 3.25, 3.5, 3.75, 4.0, 4.5, 5.0 մմ, երկարությունը - 6, 8, 12, 15, 20, 25 մմ: Բալոնային կաթետր (RX), 0,014", կաթետրի երկարությունը՝ 145 սմ: Բալոնի նյութը՝ Պեբակս: Արտաքին հատվածում կրկնակի հիդրոֆիլային ծածկույթ և հիդրոֆոբային ծածկույթ՝ կաթետրի հատվածում: Բալոնի կրկնակի շերտի հաստությունը՝ ոչ ավել քան 0,0014" (0.036 մմ) 2,25-5,0 մմ չափսերի համար: Բալոնի նոմինալ բացման ճնշումը՝ 8 մթն, պայթման առավելագույն ճնշումը՝ 14 մթն, ծայրի պրոֆիլը՝ 0,017" (0.43), ծայրի երկարությունը՝ ոչ ավել 3 մմ, շաֆթի պրոքսիմալ/դիստալ մասի տրամագիծը՝ 2,1/2,4F: Շաֆթի մեջ ինտեգրված վոլֆրամային ռենտգեն-կոնտրաստ նշանակիրներ 1,0 մմ երկարությամբ: Տրամագիծը-1.2, 1.5, 2.0, 2.25, 2.5,2.75, 3.0, 3.25, 3.5, 3.75, 4.0, 4.5, 5.0 մմ, երկարությունը - 6, 8, 12, 15, 20, 25, 30 մմ: Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75% , 1-2 տարի պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս: Ապրանքը պետք է լինի նոր չօգտաործված գործարանային փաթեթավորմամբ:</p>
23	բալոնային կաթետերներ	<p>Բալոն չընդլայնվող գնդանոթով, կատետրի երկարությունը՝ <b>145սմ</b>, հիդրոֆիլիկ ծածկույթով, X քրթինգ ծածկույթով աշխատանքային հատվածում, նոմինալ ճնշումը 1216ԿՊա, Մաքսիմալ ճնշումը 2229ԿՊա 2.0-ից 4.0 մմ տրամագծով բալոնների համար, 2026ԿՊա 4.5 մմ-ից 5.0 մմ տրամագծով բալոնների համար.: բալոնները եռաթև են: Մուտքի ծայրի տրամագիծը 0.43 մմ: Կախված վիրահատվող անոթի տրամագծի չափից կաթետրի պահանջվող չափերն են ըստ տրամագծի՝ 2.0; 2.25; 2.5; 2.75; 3.0; 3.25; 3.5; 3.75; 4.0; 4.5; 5.0 մմ: Կախված անոթի վնասված մասի չափերից կաթետրի պահանջվող չափերն են ըստ երկարության՝ 6 մմ; 8.0; 12 մմ; 15 մմ; 20 մմ; 25 մմ; 30 մմ:</p>
24	բալոնային կաթետերներ	<p>Ընդլայնվող գնդանոթով բալոն, կատետրի երկարությունը՝ <b>142սմ</b>, Platinum Iridium, փակված վիճակում 1.25-1.5-ի համար 0.022", մնացած չափսերի համար 0.24" պրոքսիմալ հատվածում 1.98FR չափ, Դիստալ հատվածում 2.4-2.7, Նոմինալ շերտում 7 մթն , մաքսիմալը 14-16 մթն. կախված չափերից բալոն նախատեսված դիլատացիայի համար: չափսերը՝ տրամագիծ՝ 1.25,1.5,2.0,2.25,2.5,2.75,3.0,3.5,4.0,4.5 մմ: երկարություն՝ 6,9,12,14,15,17,20,25,30,33,38,41 մմ: Ֆորմատ- հատ, Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի առկայություն, Ֆիրմային նշանի առկայությունը:</p>
25	Դաստակի ճնշող կապ	<p>Ռադիալ զարկերակի փակիչ: Տեղադրվում է դաստակից <b>3-4սմ</b> հեռավորության վրա: Նոմինալ օդի ծավալը <b>ոչ պակաս 13մլ</b>, մաքսիմալ օդի <b>ծավալը ոչ ավել 18մլ</b>: Կախված վիրահատվող հիվանդի դաստակի չափերից ռադիալ զարկերակի փակիչի</p>

		պահանջվող չափերն են՝ սովորական (M չափսի) և L-չափսի: Միջազգային ISO13485, CE MARK որակի վկայականների առկայություն: Պետք է լինի գործարանային փաթեթավորմամբ որը պետք է տեղադրված լինի տուփի մեջ: Հանձման պահին ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն 75%-ի առկայություն: Պատվիրատուի կողմից նշված վերջնական օգտագործողը իրավունք ունի վերադարձնել՝ ըստ անհրաժեշտության, միայն մինչև մատակարարված ապրանքի ամբողջ պիտանելիության ժամկետի նվազագույնը 50%-ի առկայության դեպքում: Հակառակ դեպքում մատակարարն իրավունք ունի պահանջել վճարել մատակարարված ապրանքի համար:
26	Թրոմբասալիդ ացիդն կաթետեր	"Ասպիրացիոն կաթետեր, դիստալ չափը <b>1.7մմ</b> , պրոքսիմալ <b>1.4մմ</b> : Մակերևույթը՝ քաշող դիստալ մասում <b>0.79մմ<sup>2</sup></b> , պրոքսիմալ հատվածում <b>0.95մմ<sup>2</sup></b> . մուտքի պրոֆիլը 0.019": Հիդրոֆիլիկ ծածկույթ <b>40սմ</b> , աշխատող սեգմենտը RX= 23սմ: Ցանկացած մատակարարված խմբաքանակի համար CE MARK որակի վկայականները առկա են: Նոր է , չօգտագործված, գործարանային ստերիլ փաթեթավորմամբ: Ներառում է տեխնիկական ցուցանիշները, առանձնահատկությունները և օգտագործման կանոնները՝ գործարանային ձեռնարկի ձևով: Հանձնելու պահին առկա է պիտանելիության ժամկետի 70%-ը:
27	Ժամանակավոր կարդիոաստի մույսատրի էլեկտրոդ	<b>Ժամանակավոր կարդիոաստի մույսատրի էլեկտրոդ MEDTRONIC սարքին համատեղելի</b> Հանձնելու պահին առկա է պիտանելիության ժամկետի 70%-ը:

Ուսումնասիրելով վերոհիշյալ չափաբաժիններով տեխնիկական բնութագրերը, արձանագրում եմ, որ 15-րդ, 17-րդ, 22-րդ, 23-րդ, 24-րդ և 25-րդ չափաբաժինների մասով սահմանվել է կաթետորի հստակ երկարություններ:

Պատվիրատուն հայտնել է, որ կաթետորների համար նշվել են այն չափերը, որոնցով հնարավորինս հեշտ է աշխատելը, իսկ օրենքում նշված չէ հստակ կետ, որը պարտադրում է երկարությունները ներկայացնել միջակայքով, առաջարկվել է 4/չորս/ տարբերակ, այսինքն ընտրության հնարավորությունը սահմանափակված չի եղել:

Միևնույն ժամանակ բողոքաբերը հայտնել է, որ ներկայացված է բալունային կաթետորի բնութագրերը, որտեղ նշված են կաթետորների հստակ երկարություններ (143սմ, 145սմ և այլն), որոնք տարբեր արտադրողների մոտ լինում են տարբեր, սակայն ֆունկցիոնալ առումով թույլ են տալիս հասնել նույն արդյունքին, ինչպես նշված է տեխնիկական բնութագրում: Եթե մասնակցի կողմից առաջարկվի օրինակ՝ 141 կամ 142 կամ 144 երկարությունները, ապա դա չի կարող ֆունկցիոնալ առումով խոչընդոտ ստեղծել կիրառման համար, մինչդեռ՝ հստակ թիվ նշելով պատվիրատուն սահմանափակում է շատ ու շատ ընկերությունների մասնակցությունը:

Այս տեսանկյունից անհրաժեշտ է նշել, որ կաթետորի երկարությունը առանց միջակայքի նշելը կարող է հանգեցնել Ընթացակարգի մասնակիցների թվի սահմանափակման, ուստի անհրաժեշտ է նախատեսել համապատասխան միջակայքեր:

Ընթացակարգի 5-րդ և 15-րդ չափաբաժիններով սահմանվել են արյան ծավալային հոսքի հետևյալ արագությունները՝ 16,7 մ/վ - 4F; 21,3 մ/վ- 5F; 21 մ/վ- 5,2F, 35 մ/վ- 6F:

Բողոքաբերը հայտնել է, որ 5-րդ և 15-րդ չափաբաժիններով պատվիրատուին անհրաժեշտ է կաթետորներ, որտեղ նշված են արյան ծավալային հոսքի հստակ արագության չափեր, որոնք սահմանափակում են այլ մասնակիցների մասնակցությունը, ովքեր կարող են ներկայացնել արյան ծավալային հոսքի մեկ այլ արագություն, համարժեք ապրանք, որը ֆունկցիոնալ առումով հնարավորություն է տալիս հասնել նույն արդյունքին, ինչպես պահանջվում է տեխնիկական բնութագրով:

Այս առումով «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն 29.03.2019թ. գրությամբ հայտնել է, որ ընդունում է բողոքով ներկայացված առարկությունները:

Ընթացակարգի 27-րդ չափաբաժնով սահմանվել է ժամանակավոր կարդիոաստիմուլյատորի էլեկտրոդ MEDTRONIC սարքին համատեղելի:

Բողոքաբերը հայտնել է, որ 27-րդ չափաբաժնով պատվիրատուին անհրաժեշտ է ժամանակավոր կարդիոաստիմուլյատորի էլեկտրոդ MEDTRONIC սարքին համատեղելի, սակայն նշված չէ թե ո՞ր տեսակի ժամանակավոր սարքի համար, քանի որ այն ունի 2-3 տարատեսակ և նշված չեն էլեկտրոդն անհատականացնող հստակ չափորոշիչները:

Այս առումով «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն 29.03.2019թ. գրությամբ հայտնել է, որ ընդունում է բողոքով ներկայացված առարկությունները:

Ինչ վերաբերվում է բողոքաբերի այն պնդմանը, որ Ընթացակարգի 20-րդ և 21-րդ չափաբաժինների մասով «էվերոլիմուս և սիրոլիմուս դեղանյութերով» սահմանված լինելը խտրական է և տեխնիկական բնութագրերում այդ մասով պետք է նշվեր՝ լիմուս ընտանիքի դեղանյութով պատված, ապա այս տեսանկյունից գտնում եմ, որ բողոքաբերի կողմից նշված փաստը բավարար չի հիմնավորվել:

Ինչ վերաբերում է բողոքաբերի այն պնդմանը, որ Պատվիրատուի կողմից նշված ստենտի հետևյալ կառուցվածքը՝ «2.25-3.0մմ տրամագծով ստենտն ունի երեք կարճ և երեք երկար ամրակներ միացած ոչ գծային կապով: 30.5-4.0մմ ստենտն ունի երեք կարճ և

վեց երկար ամրակներ» միանշանակ կլինիկական փորձաքնության տվյալներ են, որոնք բացի արտադրող ֆիրմայից ոչ ոք չի կարող հավաստիացնել դրա առավել արդյունավետությունը և այդ չափորոշիչը կարող է ապահովել հստակ մեկ ընկերություն, ապա այս տեսանկյունից ևս գտնում են, որ բողոքաբերի կողմից նշված փաստը բավարար չի հիմնավորվել, միաժամանակ արձանագրում են, որ Պատվիրատուի կողմից նշվել են միջակայքեր, ուստի սույն պահանջի նախատեսումը չի հակասում Օրենքի 13-րդ հոդվածին և չի խախտում գնումների գործընթացի սկզբունքները:

Ինչ վերաբերվում է բողոքաբերի այն պնդմանը, որ Ընթացակարգի 25-րդ չափաբաժնով ևս կան սահմանափակումներ, ապա սույն մասով ևս արձանագրում են, որ Ընթացակարգի 25-րդ չափաբաժնով սահմանվել են միջակայքեր, ուստի գտնում են, որ նման պայմաններում տեխնիկական բնութագիրը չի կարող դիտարկվել որպես խտրական պահանջ:

Դրա հետ մեկտեղ գնումների և գնումների գործընթացի իրականացման կարևորագույն սկզբունքներից է հանդիսանում գնման արդյունավետ և օգտավետ իրականացումը, հետևաբար պատվիրատուի կողմից իրականացվող գնումը պետք է լիարժեք համապատասխանի վերջինիս գնման պահանջին և ապահովվի պատվիրատուի այն կարիքի բավարարումը, որի նպատակով կազմակերպվել է նշված գնումը և միևնույն ժամանակ չհակասի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ և 13-րդ հոդվածների պահանջներին:

Այսպիսով հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում են, որ «Մեգիել» ՍՊԸ-ի բողոքը ենթակա է մասնակի բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

## Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Մեգիել» ՍՊԸ-ի կողմից 06.03.2019թ. ներկայացված բողոքը բավարարել մասնակի. պարտավորեցնել «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

1. Փոփոխել տեխնիկական բնութագիրը և սույն որոշման մեջ նշված հիմնավորումների շրջանակներում համապատասխանեցնել գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին:

2. «Մեգիէլ» ՍՊԸ-ի բողոքի պահանջի 20-րդ, 21-րդ և 25-րդ կետերի մասով մերժել:

3. Սույն որոշումը ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ հայտերը բացված լինելու դեպքում՝ թիվ 5, 15, 17, 22, 23, 24, 26 և 27-րդ չափաբաժինների մասով «ԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-19/2» ծածկագրով ընթացակարգը հայտարարել չկայացած:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**Գնումների հետ կապված  
բողոքներ քննող անձ՝**



**ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**